

**Տ. ՍՈՂՄՈՑՈՆ ՔԱՐԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ
ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՈՒՓԱՒՄԵ ՏԱԾԱՐՈՒՄ**
(29 դեկտեմբերի 2002 թ.)

«Առ զուծ Տեսան մերոյ Յիսոսի Քրիստոսի,
զի լուծ նորա քաղցր է, եւ բնոն նորա փոքրովի»:
(Ձեռնադրության Մաշտոց)

Քրիստոս հավիտենական պատգամ լրվեց իր առաքյալներին և նրանց միջոցով՝ ողջ մարդկությանը, որ վերցնելով իր լուծը՝ հետքնեն իրեն, որովհետո Տիրոց պարզնած քաղցր լուծը և բնոր մեզ արժանացնում է մեծամեծ շնորհների և հավիտենական երջանկության:

Քառասուն օրեր են անցել այն պահից, երբ Քրիստոսաւշ Մայր Տաճարում երկու միաբան սարկավագներու ծնկի իջնելով՝ մեր ոխտը կսքնեցինք անմնացորդ կերպով ծառայելու հայ ժողովրդին և Հայոց Եկեղեցուն:

Ձեռնադրող Սրբազն Հայրն իր ձեռքը մեր գլխին դրեց՝ աղոթելով, որ արժանի լինենք քահանայական աստիճանն անարափ պահելու Տիրոց Սուրբ Սեղանի առաջ, իսկ Սուրբ Հոգին մաքրագործող և սրբագործող զորություն պարզեց մեզ: Սրբալոյս Մյուսողնով դրոշմվեցին և օծվեցին մեր ճակարտներն ու ծեռերը, և Ասպած մեզ նոր մարդ դարձրեց, Սուրբ Հոգին նոր անուններով կոչեց մեզ:

«Փառք Քեզ, Ասպուած փառք Քեզ, յաղագու ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Առիթից օգդվելով իմ երախտագիտությունն եմ հայքնում ազգիս Վեհափառ Հայրապետին, որ օրինեց և արդունեց երկու օծակից եղբայրներիս քահանայական ձեռնադրության և օծման, ինչպես նաև Կորպայքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանին՝ հոգևոր ծնողի պարբականությունը հանձն առնելու համար:

Իմ երախտագիտությունը նաև Գևորգյան Հոգևոր ճեմարանի փեսչությանը, որովհետո այն մեզ համար եղավ իմաստության ակունք և գիտելիքների շրենարան և որը մեզ փոլ առ փուլ կարողացավ հասցնել այս աստիճանին: Իմ շնորհակալությունը նաև Ս. Հոփիսիմն վանքի վանահայր Տ. Մագրեսոս արեղա Պողոսյանին և հոգևոր դասին, որ սիրով ընդառաջնորդ վափագիւղ պատրարքելու այս սուրբ կամարների ներքո:

Եվ այժմ, սիրելի եղբայրներ և քույրեր, իմ անդրանիկ Պատրարքն եմ մատուցում և աղոթում ծեզ համար և խնդրում ծեր աղոթքը իմ և օծակից եղբորս համար, որ ոխտը զավակները մնանք մեր Երկնակալոր Տիրոց և հավաբարիմ սպասավորները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Այսօր ավելարանական ընթերցվածքով վերստին պատրմվեց փասը մնասների առակը, որը մեզ է ավանդել Ղուկաս ավելարանիցը (Ղուկ, ԺԹ 11-28):

Մի ազնվական մարդ, որ պետք է գնար հեռու մի երկիր՝ իր թագավորությունն սպանալու, մեկնելուց առաջ կանչում է իր երեք ծառաներին և մեկին փալով փասը, մեկին՝ հինգ, և մյուսին՝ մեկ մնաս, պարվիրում է արդյունավորել դրանք մինչև իր վերադարձը: Երբ ազնվականը վերադառնում է և պահանջում արդյունքը, առաջինն ասում է. «Տե՛ր, քո մեկ մնասը փասը մնաս բերեց»: Եվ Տերը նրան փասը քաղաքների վրա իշխան է կարգում:

Երկրորդ նոյեմբես դրական պարասիան է տալիս, և նրան նոյեմբես իշխան է կարգում հինգ քաղաքների վրա: Վերջինն էլ գալով՝ մնասը թաշկինակի մեջ ծրարած ասում է: «Ահա քո մնասը, վախենում էի քեզանից, որովհետք խիսք մարդ ես, վերցնում ես՝ ինչ չես դրել, և հեճում ինչ չես սերմանել»:

Ի պարասիան այդ խոսքերի, Տերն ասում է: «Նենց քո բերանով քեզ պետք է դադեմ, անհավաքարիմ ծառա, գիրեթիր, որ ես խիսք մարդ եմ, գիրեթիր՝ վերցնում եմ՝ ինչ որ չեմ դրել, և հեճում ինչ որ չեմ սերմանել: Հապա ինչու իմ դրամը լումայափոխներին չպիտի, որպեսզի ես, գալով, դուկոսներով միասին պահանջեմ այն»:

Վերջում, որպես բարոյական խրափ և պարվեր, մեր Տեր Դիտու Քրիստոսն ասում է: «Ով ունի, նրան պիտի փրկի, իսկ նրանից, որ չունի, պիտի վերցվի այն, ինչ որ ունի»:

Ինչպիս կարելի է այդ արքահայպությունը համարելով ասրբածային գթության, ասրբվածային բարության և ողորմածության հետ: Ավետարանական մյուս առակների նըման այս առակը ևս սրուցաբանվում է ժամանակի ընդհանուր պարմական միջավայրում, երբ Դրեսարանի թագավորը պետք է մեկներ Շոռո՞ կայսրից սրանալու համար իր թագը որպես Դրեսարանի թագավոր:

Թագադրման այս կարգը նկապի ուներ Դիտու՝ մնասների մասին առակը պարմելիս, որն ունի նաև այլաբանական և բարոյական իմաստ: Քրիստոս այս առակը պարմում է Երրուսաղեմ մեկնելուց մի քանի օր առաջ, երբ բոլորն սպասում էին, թե Քրիստոս պետք է մրնի Երրուսաղեմ և վերականգնի Խրայելի թագավորությունը:

Քրիստոս սակայն այս առակով այլաբանորեն ցոյց է տալիս, որ Ինքը արքայությունն սրանալու համար նախ պետք է հեռանա, խաչի վրա բարձրանա, հարություն առնի, վեր ենի, Նոր աջ կողմում նստի և հետո միայն վերադառնա՝ որպես թագավոր և Տեր, ժառանգակից դարձնի ընդրյալներին Երկնքի Արքայությանը:

Իսկ այն մեկը, որ իրեն փրկածը ծրաբել ու թաքցրել էր վարշամակի մեջ, փարիսեցիներին ու դպիրների դասն է ներկայացնում, ովքեր իրենական ասրբածագործ օրենքը իրավես ծրաբել էին թաշկինակի մեջ, չին կիսում ուրիշի հետ, վախենում էին որևէ բան ավելացնել այդ օրենքին՝ պահելով օրենքի միայն տառը: Նրանց մեջ ոչ թե սերն էր իշխում Ասպծո նըկագմամբ, այլ՝ երկուողը, վախը, սարսափը, որովհետք նրանք Ասպծոն պարկերացնում էին որպես խիսք անձնափորություն, որ պահանջում է այնպեսից, որպես ոչինչ չի վրկել, և հեճում այնպեսից, որպես ոչինչ չի սերմանել:

Սիրելի Եղբայրներ և քույրեր, ընավ պարահական չէ, որ այս առակն ընթերցվեց այսօր՝ այս կիրակի, որով մենք եղբափակում ենք այս տարին: Մեր Հայրապետների իմաստուն կարգավորությամբ, մենք մեկ անգամ ևս ունենադիր կարգինք այս, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը խորհրդածի ոչ միայն այս տարի, այլև ընդհանրապես մեր ողջ կյանքում, մեզ դրված պարզեցների իրականացման, արդյունավորման և առավել արժեվորման մասին:

Ինքնաքննության այս պահին մենք պետք է ուշադիր լինենք, որպեսզի չինի, թե վաղը, երբ Քրիստոս՝ մեր Տերը, մեզանից հաշիվ պահանջի, մեր ունեցած պարզեց թաշկինակի մեջ ծրարված մնա: Աղոթենք և աղոթենու առավել և աղոթենու առաջ գործենք, քարոզենք, և թող այս տարվա վերջին կիրակին մեջ համար լինի մղում, ջանք, ճիգ, որպեսզի Քրիստոսին վկայելու մեր սկսվող քարոզությունը նոր տարուց կարողանանք մեզ դրված շնորհներով կրկնապարկել, եռապարկել, բազմապարկել՝ ի փառ Ասպծո և ի շինություն մեր Եկեղեցու ամեն: